

միներէն «Գրական» կ'անցնէ «ի Աստուածատու» (Արարատ, 1888, էջ 30), սակայն չէ յիշուած թէ Ս. Ստեփանոսի վանքը կ'իջեանի, մինչդեռ հոն կ'իջեանի 1736ին Արարատ Կրեւոյցի կաթողիկոսը, ինչպէս իր պատմութեանը մէջ կը հարգորդէ՝

«Եւ ապա իջայ ի Աստուածատ օրհնեալ գիւղաքաղաքն եւ ի վանքն Աստուածատու՝ գեղեցկաչէն եւ պատուական, զի վանքերն մի քան զմի պայծառ եւ գեղեցիկ յօրինեալ հիւնարի տեսողաց, աւաղ ժամանակին ներդրութեան եւ նուազութեան ազդիս իմոյ Արամեան զի զալարին աղիք իմ ի տեսանելի դանձման վանորայսն եւ զուրբ ուխտսն վասն ոչ գոյոյ բաւական թեմ եւ վիճակ եւ թէպէտ դոն, բայց ամայի եւ անչէն եւ անմարդարնակ եւ թէ գտանին ոմանք աղքատացեալք եւ նոքա որք ոչ կարեն օգնել եւ լրացուցանել զպէտս եւ զպահասութիւն վանորէիցն, այլ եւ ինքեանք եւս կարօտին դարմանելոյ ի վանորէից: Այլ եւ ի յԱստուածատ յաւուր մեծահարաչի կիրակէին կատարելով իմ զուրբ խորհուրդն ձեռնադրեցի Գ. Եպիսկոպոսա) Սպահանցի Գէորգ վարդապետն ըստ ինչորոյ առաջնորդին իւրեանց Աստուածատու վարդապետին եւ իշխանացն¹⁰...» (Արարատ Կրեւոյցի, Պատմագրութիւն, էջ 78):

Սիմէոն կաթողիկոսին 1765ին կը ներկայանայ Սարգիս վարդապետ, որ Մինաս կաթողիկոսէն տարիներ յառաջ Նախավայրի վանքին վէճի կարգուած էր եւ հաւանօրէն վէճելութեան պաշտօնէն ձանձրացած: Վասն զի Սիմէոն կաթողիկոսէն կը խնդրէ՝ «զի վանիցն այնմիկ կացուցէ սրբազանն զԱռաջ-

¹⁰ Զ. Ալիշան կը գրէ՝ «Ի նոյն ամս (1736) զրէ եւ Այսիրեան ոմն Մուշեցի տէր Վրդանէս անձ չափարանութեամբ զտեղւոյս, ուր եւ Լատիկ անուն առնապատ մի յայտնէ, եթէ պղպէս մարթ եղէ ընթեռնուլ եւ իմանալ զրանսն եւ ոչ Շատիկ՝

«Յաւուր յետնում ժամանակի, Հանդիպեցայ յանապատի, Գարբրեալ խախտեալ կայր ամայի, Զկայր մեզի (միջի) կրօնաւոր մի, Ու եւ յերկրէ (Նախ) իջեանցի, Գիւղաքաղաքն Աստուածատին, Ի յանապատին Լատիկեցի Ի յերուսաղէմ գնալոց էին»:

(Սիւսկան, էջ 513):
Դիտել կու տամ որ Շատիկու վանքի եկեղեցւոյ արեւելեան կողմը տապանաքարի մը վրայ կայ՝
«Սոյն այս տապան Պետրոս դիտի Գոյով տեղեալ Աստուածատցի, Սորին ջանիւք ջուրս բերի. ՌՃՄՁ թվի, Աս Տէր մահուամբ վերափոխի»:
(Արարատ, 1888, էջ 169) հմմտ. Նախորդ ծառայութիւններէն մինն):

նորդ ոք» (Դիւան, Գ., էջ 125): Սակայն կաթողիկոսն անոր կամքը չի կատարեր: Որովհետեւ ժողովրդեան հետը «մահասարական թուղթ ինչ» չունէր եւ վանքին առաջնորդութեան պաշտօնը ստանձնող չկար: Նոյն իսկ ինքը՝ Սարգիս յանձնառու չլլար այդ պաշտօնին եւ կաթողիկոսը չուզէր անոր վրայ ստիպում բանեցնել, եւ «դարձոյց զնա յետս սրբազան վեհն պատուիրանաւ, զի լրջմտութեամբ հողացէ զվանիցն շինութեան»:
Սարգիս վէճելութեան պաշտօնին մէջ վերահաստատուած՝ կը դառնայ Աստուածատ մինչեւ մէկուն առաջնորդ նշանակուի: Այնպէս կը թուի թէ Աստուածատի ժողովուրդը վանքէն պաղեր է եւ նոյն իսկ անոր շինութեան մէջ անիւղթ. ուստի եւ կաթողիկոսը կը ստիպուի սիրով յորդորել ժողովուրդը վանքին կապուելու եւ Սարգիսի ժողովարարութեան կոնդակ մը կը յանձնէ (Դիւան, Գ., էջ 126):

Սարգիս Աստուածատ վերադառնալով հոն ժողովրդեան կը յայտնէ կաթողիկոսին կամքը եւ նորէն թեմին կը ներկայացնէ իր հրաժարականը: Ժողովուրդը նկատելով անոր ձեռութիւնը «մահասարական թուղթ» մը յանձնելով Միքայէլ վարդապետի ձեռքը՝ զինքը էջմիածին կը զրկէ Եպիսկոպոս ձեռնադրուելու եւ առաջնորդ հաստատուելու: Կաթողիկոսը Միքայէլ վարդապետը սիրով վանքին առաջնորդ կը կարգէ, սակայն Եպիսկոպոսական ձեռնադրութիւնը կը զլանայ. վասն զի նորընտիր առաջնորդը վանքին որպիսութեան ծանօթ չէր եւ երկրորդ «թեմ այնմ վանից Աստուածատ միայն էր եւ այն եւս նուազեալ, մինչեւ Ժ. կամ ԺԵ. տուն հազիւ գտանել կարէր այժմ: Վասն որոյ չէր պատշաճ թէ ի վերայ նոցին յատկապէս Եպիսկոպոս մի ձեռնադրեցի» (Դիւան, Գ., էջ 469—470) հմմտ. եւ Սմբատեան, Երնջակ, էջ 453):

Սիմէոն կաթողիկոսի¹¹ յաջորդը՝ Դուկաս Կարնեցին 1790ին կը գրէ կոնդակ մը առ Աստուածատցի մելիք Ստեփան «վասն կարգման ի վանահայրութիւն Աստուածատայ վանից Դանիէլ վարդապետի առաջնորդին Սոյա» (Սմբատեան, Երնջակ, էջ 462):

Վերջնիցս դարուն առաջնորդներէն անուանի է Նիկողայոս վարդապետը, որ 1831ին նորոգել տուած է եկեղեցւոյն հիմնապատերը,

¹¹ Այս շրջաններուն ծանօթ է Արարատ Աստուածատցի, որ կը ջանայ Պոլսոյ մէջ էջմիածնի փոխարկութիւն մը ստեղծել, սակայն չի յաջողիր (հմմտ. Չամչեան, Պատմ. Հայոց, Գ., էջ 866, 871—875):

որոնք 1840ի երկրաշարժէն նորէն բաւական վնասուած են: Իսկ 1882ին վանահայր էր Յովակիմ Եպիսկոպոս Տէր Գրեկորեան, որ Գէորգ կաթողիկոսի մահէն յետոյ էջմիածին կ'անցնէ վանքը Երնջակի Ստեփանոս վարդապետին յանձնելով¹² (Ալիշան, Սիւսավան, էջ 513): 1907ին վանքը «պահպանուած» էր վանահայր վարդապետ, որ վանքի սենեակները երկաթուղու գիծը անցկացնող կապալառուին տուել է օգտուելու այն պայմանով, որ նա վերանորոգէ եկեղեցու մի մասով, որ նա վերանորոգէ եկեղեցու մի մասով խախտուած մասերը» (Աղգր. Հանդ., 1907, էջ 151—152):

Ս. Ստեփանոսի (Կարմիր) վանքը եւթակայ եղած է ստէպ փլուզումի եւ կործանումի — այսպէս ԺԹ. դարու սկիզբը Արթուր Միլր— գան քանդել տուած է պարսպի մէկ մասը՝ քարերը Արթուրապետի վրայ դործածելու համար — բայց ունեցած է դործօն առաջնորդներ եւ վարդապետներ, որոնք նուիրուած են անոր վերանորոգումին ու կանգնուած են նոյն իսկ պայծառացումին: Ի մէջ այլոց մին, նոյն իսկ պայծառացումին է աւանդութիւն մը, ժողովուրդը պահած է աւանդութիւն մը, որուն համեմատ Բարսեղ անուն կաղ վարդապետ մը զիւղէ զիւղ կը շրջէ միջոցներ հայթայթելու վանքին նորոգութիւնն ի գլուխ թայթելու համար: Շահը զինքն իր մօտը կը հանելու համար: Շահը զինքն իր մօտը կը կանչէ եւ կը յանդիմանէ որ ժողովարարութիւն ընելով ժողովուրդը կը նեղէ: Վարդապետը երկիւղէն պահէ մը կը լռէ ու ապա սրամտութեամբ կը պատասխանէ՝ «Ես կամենում եմ Աստուծոյ տուն շինել քո կեանքիդ համար արեւաշուքիւն եւ տէրութեանդ յարաստեութիւն ինչորելու համար» (Աղգր. Հանդ., 1907, էջ 151): Այս պատասխանը շահին դէմ գալով 300 թուման նուէր կու տայ եւ կը թոյլատրէ վանքին նորոգութիւնը, որ իրապէս տեղի կ'ընենայ:

Սուրբ Ստեփանոսի եկեղեցւոյն մէջ պահուած են՝ Ս. Ստեփանոսի եւ Ս. Արիստահէսի աջերը, արծաթէ եւ ոսկեղօժ պահպանակներու մէջ ամփոփուած¹³: Թովմաս Վանադեցին կը գրէ՝

¹² իստասիբոն Յովհաննէս վարդապետի մասին (հմմտ. վերը):
¹³ Կը պատմուի թէ՛ Արթուր Միլրգան ուղեր է Ս. Ստեփանոսի վանքը կործանել, բայց վանահայր պատանքին անսալով կը հրաժարի եւ Ս. Յովհաննէս կուստատանը կը սկսի կործանել, սակայն վանահայրը (Պաշտօնը) վրայ կը հասնի եւ անոր գործիքին խաչին մէջէն Ս. Արիստահէսի աջը հանելով զայն Ս. Ստեփանոս կը փոխադրէ (Աղգր. Հանդ., 1907, էջ 149) հմմտ. եւ վերը):

«Ի Նախճաւան յերկիր հասին, եւ սուրբ ուխտն Աստուածատայ Կրկնակի վանքն որ անդ կայ Սուրբ Յովհաննէսն որ գերակայ, Ստեփանոս նախնի վկայ եւ սուրբ Խաչն գերահռչակ Ռատակեսի սրբազոյակ»:

Այս տողերը Հ. Ալիշան յառաջ բերելէ վերջ կը գրէ՝ «Սովորաբար վասն Գետարգել նշանին ասի երբեմն կրեալ յԱրիստակիտէ որդւոյ սրբոյ Լուսաւորչին, այլ պահել նորին կամ այլոյ խաչի ի Կարմիրս այս վանս ոչ յիշել կարծեմ յայլուր» (Սիւսկան, էջ 513, Աղգր. Հանդ., 1907, էջ 153):

Ս. Ստեփանոսի վանքը ունեցած է բաւական ընդարձակ հող ու կալուած¹⁴ (Նոր Դար, 1891, Թ. 161 եւ 177 [հմմտ. նաեւ 1894, Թ. 72] եւ Սմբատեան, Երնջակ, էջ 453):

ՄԱՂԱՐԳԱՅ ԿԱՄ ՇԱՄԲԻ Ս. ՆԱԽՃԱՎԱՅԻ ՎԱՆՔԸ
Նախճաւանի¹⁵ ամէնէն հռչակաւոր վանքն է Նախավայրի վանքը, որ համանուն ուրիշ վանքերէ զանազանուելու համար իր շուրջն եղած մերձաւոր վայրերուն վրայէն կոչուած է Մաղարգայ կամ Մաղարթայ եւ Շամբի կամ Գարաշամբի (Նախավայրի) վանք:

Նախավայրի վանքը բարձրացած է Շամբի ձորի մէջ, վարժապետ գիւղէն երեք ժամ հեռու (Saint-Martin, Mémoires, II, էջ 422. Մշակ, 1902, Թ. 52): Հ. Ալիշան կը սահմանադէ՛ «Իրբեւ մղոնաւ եւ կիսով սահմանադէ՛ հարաւոյ գեղջս եւ կիսով այսր չափու յափանց Երասխայ ի գոյ մի ստորոտի Մաղարթայ կամ Մաղարգայ լեռին ի դժուարակիս վայրի կանգնեալ կայ հռչակաւոր մեծանաստան համանուն, որ յոմանց Գ. եւ յայլոց Թ. տառիս գրի, գտաւ ուրեք զրեալ եւս Մաղարթ¹⁶» (Սիւսկան, էջ 516):

¹⁴ Աստուածատ գիւղի եւ անոր վանքին ու Մաղարթի Նախավայրի վանքի մէջ եղած իրաւական հարցի մասին տեսնել Մաղարթայ վանքը եւ անոր կոնդակները (հմմտ. վերը, էջ 288):

¹⁵ Սմբատեան Նախավայրի վանքը Երնջակի վանքերու շարքին մէջ կը գնէ (Երնջակ, էջ 487):

¹⁶ Հ. Ալիշան կը գրէ նաեւ՝ «Ի Բարսեղեան կոնդակին ի թեմս Մաղարգայ վանքն ասի Շամբի եւ իր վանքն որ թուի որոշել զվանս Մաղարթայ ի վանքն Շամբի, այլ մեզ չէ յայտ յետ Աստուածատայն, բայց միայն մեծ վանքն Մաղարթայ» (Սիւսկան, էջ 515): Հասկանալու է միեւնոյն վանքը, որ Մաղարթայ թեմին կը վերաբերի իրբեւ թեմի, վասն զի ամէն վանք թեմ չունէր: Մաղարթայ վանքը թեմաւոր վանք էր, բայց կարելի է գուցէ նմանապէս խորհել որ Շամբի մէջ ուրիշ վանք մըն ալ եղած ըլլայ:

